Արձանագրություն N 4
ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 սեպտեմբերի 2017թ
ժամը 10:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Գևորգյանը
անդամներ՝ Ա. Նավասարդյանը, Ա. Ասատրյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ա. Գևորգյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերով սահմանված ժամկետում «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ն և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հանձնաժողովին են ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցների և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.
ա/ «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 11-րդ, 12-րդ, 13-րդ չափաբաժինների համար,

բ/ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների համար,

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ն. Կիրակոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջների և ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/5 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

անդամներ՝ _____ Ա. Նավասարդյան

_____ Ա. Ասատրյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան